# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N << ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/4-1>>

ք. Երևան <<11>> ապրիլի 2017թ.

ՀՀ ԿԱ ԱԳ կադաստրի պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ցոլակ Գևորգյան Ա/Ձ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ց.Գևորգյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում պայմանագիր կնքելու պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե | Ա/Ձ Ցոլակ Գևորգյան |
| Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7 | ք. Երևան, Նազարբեկյան թաղ. 31Ա շ., |
| h/h 900013220026 | բն. 6 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հայէկոնոմբանկ ԲԲԸ |
| ՀՎՀՀ 02534328 | Հ/Հ 163028012686 |
| Վարչությունների ղեկավար՝ | ՀՎՀՀ 27847811 |
| Վ. Հակոբյան | Ց. Գևորգյան |
| /ստորագրություն/ | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 1*
*Ռ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/4-1 ծածկագրով գնման պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## Չափաբաժին 1

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Սույն բնութագրով սահմանվում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից շահագործվող «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլկտրոնային համակարգում /այսուհետև՝ էլեկտրոնային համակարգ/ անհրաժեշտ ծրագրային ապահովման փոփոխությունների և լրացումների տեխնիկական պահանջները:
2. Էլեկտրոնային համակարգում ծրագրային փոփոխություններն ու լրացումները պետք է նախագծվեն հաշվի առնելով «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգի ճարտարապետությունը և աշխատանքի սկզբունքները:
3. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները պետք է Պատվիրատուին տրամադրվեն որպես «Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովման ընդլայնումներ /extensions/:
4. Պատվիրատուն ծրագրային փոփոխությունների մշակման աշխատանքները իրականացնողին կտրամադրի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերը /source code/ և տեխնիկական փաստաթղթերը:

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Որոշակի չափանիշով ընտրված անշարժ գույքի միավորների վերաբերյալ էլեկտրոնային համակարգում մուտքագրված որակական, քանակական բնութագրերի կամ գրանցված իրավունքների կամ սահմանափակումների վերաբերյալ տեքստային տվյալներից օգտվողի ընտրված տեքստային տվյալների արտահանում՝ HTML ձևաչափով՝ MS Excell կամ PDF ձևաչափի ֆայլերի տեսքով ընտրված տվյալների պահպանման հնարավորությամբ.
2. Անշարժ գույքի որոշակի միավորի նկատմամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական էլեկտրոնային մատյանում կատարված բոլոր փոփոխությունների վերաբերյալ Պատվիրատուի կողմից սահմանված ձևաչափով ամփոփ տեղեկատվություն.
3. Անհրաժեշտության դեպքում նշված հաշվետվությունները պետք է հասանելի լինեն արտաքին /կադաստրի կոմիտեի ներքին գերատեսչական ցանցից դուրս/ օգտվողների համար ցանցային ծառայության (web service) միջոցով, որի միջոցով արտաքին օգտվողը մուտքագրելով որոշակի /սահմանափակ/ ժամկետ /ամսաթվերի միջակայք/ պետք է ստանա ձևավորված հաշվետվությունը XML ձևաչափով: Կատարողը պետք է տրամադրի նաև XML-ի և ցանցային ծառայության նկարագրությունը:
4. Քաղաքացիներին և իրավաբանական անձանց կողմից ներկայացված դիմումների հիման վրա գույքի ու դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում նաև միևնույն սուբյեկտին պատկանող գույքային իրավունքների առկայության վերաբերյալ, ինչպես նաև կադաստրային քարտեզից տեղեկատվության տրամադրման էլեկտրոնային վարույթի ստեղծում: Նշված դիմումը և դրա հիման վրա իրականացվող էլեկտրոնային վարույթը ունեն հետևյալ առանձնահատկությունները.

- Դիմումի մուտքագրման ընթացքում պարտադիր չէ անշարժ գույքի հասցեի մուտքագրումը: Հասցեն կարող է չմուտքագրվել, կամ մուտքագրվել միայն մարզը կամ համայնքը:

- Տվյալ տեսակի դիմումի մուտքագրման դեպքում, դիմումի տեսակի մուտքագրման բաժնում պետք է ստեղծվի «Անձանց քանակը» անվանմամբ նոր դաշտ, որի պարունակությունը պետք է պահպանվի դիմումների վերաբերյալ տվյալների աղյուսակում:
- Տվյալ տեսակի դիմումը չի կցագրվում որևէ առկա էլեկտրոնային կադաստրային գործին, այլ պահպանվում է հատուկ այս տեսակի դիմումների համար ստեղծված էլեկտրոնային թղթապանակում:
- Վարույթի տեսաներածման փուլի ավարտից հետո համակարգը այս տեսակի դիմումների համար պետք է ձևավորի նախապես համակարգ մուտքագրված գործառույթ, որի օղակներից է հանդիսանալու ոչ միայն բուն կատարող, այլ որևէ այլ օգտատեր (ստուգող), որը ունենալու է դիտման կարգավիճակ,
- Ստուգող օգտատիրոջ կողմից վարույթը ավարտել նշելուց հետո անհրաժեշտ է, որ համակարգը գեներացնի տեղեկանք, դիմումը տեղափոխի դիմումի հանձնման պատուհան, իսկ տեղեկանքում որպես կատարող նշվի կատարող օգտատիրոջ տվյալները
- Տվյալ տեսակի դիմումների համար դիմումի հանձնում պատուհանում ստեղծել այնպիսի հնարավորություն, որ <<Փաստաթղթեր>> կոճակը ակտիվանա ոչ թե ըստ կադաստրային գործի, այլ ըստ դիմումի բանալիի:
- Տվյալ տեսակի դիմումի համար կազմվում է նոր՝ «Գույքային իրավունքների առկայության և կազմի վեաբերյալ» տեղեկանք անվանումով տեղեկանք, որը ձևավորվում և համարակալվում է համակարգում առկա՝ այլ տեղեկատվության տրամադրման վարույթի ավարտական տեղեկանքի ձևավորման կանոններով (բլանկի ձևը կտրամադրվի)՝ նախատեսելով սիմվոլների մուտքագրման ավելի մեծ քանակություն, քան այլ տեղեկատվության տրամադրման վարույթի ավարտական տեղեկանքի ժամանակ :
- Եթե սխալի ուղղում կամ վրիպակի ուղղում տեսակի դիմումի մուտքագրման բաժնի «ավարտական փաստաթղթի համարը» դաշտում լրացվել է «Գույքային իրավունքների առկայության և կազմի վեաբերյալ» տեսակի տեղեկանքի համարը, ապա տվյալ դիմումի հիման վրա սույն կետով սահմանված կանոններով ձևավորվում է գործառույթ, որը համակարգի կողմից մակագրվում է ավարտական փաստաթուղթը կազմած օգտվողին, իսկ դրա բացակայության դեպքում՝ նույն բաժնի այլ օգտվողի՝ դիմումների բաշխման ներկայիս հաջորդականությանը համապատասխան:
- Գույքի նկատմամբ գրանցված իրավունքների առկայության մասին դիմումները, կից փաստաթղթերը և դրանց հիման վրա կազմված փաստաթղթերը պետք է հնարավոր լինի որոնել և դիտել ըստ դիմումի բանալիի, ավարտական փաստաթղթի համարի, դիմողի անձնական տվյալների:
- Տվյալ տեսակի դիմումների ընթացքի ժամանակ համակարգը դիմումը 2-րդ փուլից հետո ավտոմատ հասցեագրում է գործառույթի կառավարման փուլ, երբ այդ փուլից մերժվում է, անհրաժեշտ է որ դիմումը մերժելուց ավտոմատ հետ գա նորից 2-րդ փուլ:

5. Փաստաթղթաշրջանառության համակարգ> Հաշվետվություններ> Ֆինանսական հաշվետվության մեջ արտածվող տեղեկատվության մեջ ավելացնել սյունակ, որտեղ կարտացոլվի դիմումի օրերի քանակը, որը լրացվում է դիմումի ընդունման առաջին փուլում <դիմումի տեսակ> դաշտի <կատարման օրերի քանակ> սյունակում:

6. Փաստաթղթաշրջանառության համակարգ> Էլեկտրոնային արխիվ> Փաստաթղթերի ավելացում բաժնում անհրաժեշտ է առանձին իրավունք, որով հնարավոր լինի փասատթղթերի ավելացում կամ խմբագրում կատարելու:

7. Փաստաթղթաշրջանառության համակարգ> Հաշվետվություններ> ՍԳ հաշվետվություններ> Ըստ ներկայացված փաստաթղթերի հաշվետվության մեջ Հաշվետվության տեսակ ցանկի մեջ անհրաժեշտ է ստեղծել հնարավորություն, որով հնարավոր լինի տվյալ հաշվետվությունը ստանալ ըստ գույքի գտնվելու մարզի:

8. Անհրաժեշտ է, որ գործարքներ բաժնում առուվաճառք, նվիրատվություն, օտարման այլ տեսակներ և դատարանի վճռի հիման վրա գույքի օտարում տեսակի գործարք նշելիս նախկին սեփականատիրոջ իրավունք և կից իրավունքներ դաշտերում, իսկ գույքի օգտագործման գործարքներ նշելիս վարձատուի իրավունք և կից իրավունքներ դաշտերում միևնույն իրավունքը կցելիս համակարգը էլեկտրոնային վարույթի ավարտման ժամանակ ստուգի և մինչև տվյալների համապատասխան ուղղում կատարելը չթողնի ավարտել /բերի համապատասխան հաղորդագրություն/:

9. Գործերի կարգավիճակի դիտում իրավունքի ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել թե տվյալ օգտատիրոջը կցված ստորաբաժանումը, որ մարզի դիմումներն է իրավասու սպասարկելու, և թույլատրել

դիտելու միայն տվյալ մարզի դիմումների կարգավիճակը, ընդ որում կատարող հանդիսացող օգտատերի դեպքում միայն իրենց բաշխված դիմումների կարգավիճակը:

10. Համարգում դիմումների կատարման օրերի մեջ մեկ օրվա կատարման ժամկետ ունեցող դիմումները տարանջատել մյուս դիմումներից:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՄՇԱԿՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

1.Սույն տեխնիակական բնութագրով նախատեսված ծրագրային ապահովման մշակողը Պատվիրատուի հետ ծրագրային ապահովման մշակման պայմանագիրը կնքելուց հետո մեկամսյա ժամկետում պետք է Պատվիրատուի հետ համաձայնեցնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված հաշվետվությունների ձևաչափերը, դրանցում ներառվող տվյալների կազմը, հաշվետվությունների ձևավորման չափանիշները, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված լրացումների տեխնոլոգիական լուծումները և մանրամասն բնութագրերը, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման, փորձարկման և հանձնման ժամանակացույցը:

2. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների արդյունքում մշակված ծրագրային ապահովման ընդլայնումները պետք է հանձնվեն Պատվիրատուին ըստ պատրաստվածության աստիճանի՝ սույն տեխնիկական բնութագրի 3.1. կետով նախատեսված ժամանակացույցին համապատասխան:

3. Կատարողը չի կարող որևէ այլ կերպ փոփոխության ենթարկի էլեկտրոնային համակարգի ծրագրային ապահովումը, քան դա անհրաժեշտ է սույն տեխնիկական բնութագրրով անհրաժեշտ լրացումների իրականացման համար:

4. Կատարողը պետք է ապահովի Պատվիրատուի կողմից տրամադրված փորձարկման ենթակառուցվածքում Կատարողի կողմից իրականացված յուրաքանչյուր ընդլայնման՝ որպես էլեկտրոնային համակարգի բաղկացուցիչ մասի փորձարկումը:

5. Յուրաքանչյուր ընդլայնման փորձարկման արդյունքներով Պատվիրատուն Կատարողին ներկայացնում է փորձարկման արդյունքների արձանագրություն՝ նշելով մշակված ծրագրային ապահովման փորձնական շահագործման արդյունքում հայտնաբերված թերությունները, որից հետո Պատվիրատուն պարտավոր է 3-օրյա ժամկետում Պատվիրատուիին ներկայացնել թերությունների շտկման ժամանակացույց կամ հիմնավոր առարկություններ Պատվիրատուի կողմից ներկայացված թերությունների վերաբերյալ:

6. Կատարողը պետք է իր կողմից մշակված ծրագրային ապահովումը հանձնի Պատվիրատուին ներառելով ծրագրային ապահովման ծածկագրերը /source code/, դրա հետագա զարգացման կամ փոփոխման համար անհրաժեշտ բոլոր տվյալները, ինչպես նաև ծրագրային ապահովման նկարագրությունը պարունակող տեխնիկական փաստաթղթերը:

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | ավարտը |
| Պայմանագիր կնքելու օրից | 25.12.2017թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Համբարձյան ____________
/ստորագրություն/

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ Ցոլակ Գևորգյան
ք. Երևան, Նազարբեկյան թաղ. 31Ա շ., բն. 6
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163028012686
ՀՎՀՀ 27847811

Ց. Գևորգյան ----------------------
/ստորագրություն/

Կ.Տ.

*Հավելված 2*
*N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/4-1 ծածկագրով գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | Ընդամենը Տարի |
| 1 | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 1250.0 | 2500.0 | 3750.0 | 5000.0 | **5000.0** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝
Հ. Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
Ա/Ձ Ցոլակ Գևորգյան
ք. Երևան, Նազարբեկյան թաղ. 31Ա շ., բն. 6
Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163028012686
ՀՎՀՀ 27847811
Ց. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*Ն ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/4-1 ծածկագրով գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20  թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ՇՀԾՁԲ-17/6/4-1 ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն